էք յայտարարել։ Զանգեզուրային գնդակահարութիւնները Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարրդամիշում և այլ վայրերում, յեղափոխական բանուորներին, գիւղացիներին և նրանց ղեկավարներին անխնայ ձերբակալելը, ծեծելը, թալանելը — ա՛յս ամենը վրդովում է Ազրբէջանի պրոլետարիատի և Խորհրդային Ռուսաստանի կարմիր զօրքերի յեղափոխական խիղճը։

Հայաստանի և Ղազախի գիւղացիներն իրենց ընտանիքներով փախչում են ձեր բաշիբոզուկների ձեռքից։ Ինչպէս փախչում էին մուսաւաթականների ձեռքից և ապաստարան են գտնում Խորհրդային Ազրբէջանի յեղափոխական գիւղացիների մօտ։ Այդ ամենալաւ ապացոյցն է, որ մուսաւաթականները ձեր գաղափարական եղբայրներն են ու դինակիցները, և որ Հայաստանի գիւղացիներն ու բանուորները համերաշխ են Ազրբէջանի աշխատաւորների հետ դաշնակների և մուսաւաթականների դէմ կուելու գործում։

Խորհրդային Ազրբէջանում ամենուրեք, Խորհրդային Ռուսաստանի կարմիր զօրքի օգնութեամբ մենք անխնայ կերպով խեղդում ենք մուսաւաթականների հակայեղափոխութիւնը, իսկ ձեր կառավարութիւնը Հայաստանում խեղդում է բանուորների և գիւղացիների կոմունիստական յեղափոխութիւնը։ Դրանով դուք օգնում էք մուսաւաթականներին յեղափոխութեան դէմ կուելու։

Մեզ յայտնի է, որ ձեր կառավարութիւնը Կարսի շրջանում գնդակահարել է 300 հոգի։ Կարսում հակայեղափոխականների տրիբունալը, Խորէնու և Աղբալեանի գլխաւորութեամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցութեան անդամներին և գնդակահարել։ Դուք գնդակահարել էք Խորհրդ. Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի անդամ բժ. Մելքոնեանին, Կարսի յեղափոխական կոմիտէի անդամ ընկ. Ղուկասեանին, Նոր-Բայազէտի յեղ. կոմիտէի անդամ ընկ. Սարուխանեանին և մի շարք մեր ամենալաւ ընկերներին։ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Հայաստանի ներկայացուցիչը և Հայաստանի Ռազմա-Յեղափոխական կոմիտէի Բազուի ներկայացուցիչը՝ վրդովուած այն դահճային անսրտութիւնից, որ ցուցահանում էք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկւա, որտեղ անմօթաբար դիմել էք և դուք՝ ուղարկելով ձեր ներկայացուցիչներին և միաժամանակ Հայաստանում անխնայ կոտորելով կոմունիստներին։ Մենք հմոզուած ենք, որ Խորհրդային Ռուսաստանը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ վերջ տալու ձեր արիւնոտ վարմունքին։

Առաջարկում ենք դադարել մեր ընկերներին ձերբակալել ու գնդակահարել, ազատել բոլոր ձերբակալուածներին և այդ մասին յայտնել մեզ մեր ընկեր Սերգէյ Արկադիևիչ Վարդանեանի միջոցով։

Պատասխանի համար տալիս ենք երկու օր ժամանակ։ Եթէ չպատասխանեցիք, մենք կը համարենք, որ ուզում էք չարունակել նոյն քաղաքականութիւնը։

Ազրբէջանի Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէ՝ Նաֆէշվիլի, Միկոյեան։ Ռուսաստանի Կոմ. Կուս. ներկայացուցիչ՝ Կոստանեան։ Հայաստանի Ռազմայեղափոխական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ալիխ»։

Եւ մինչ մի կողմից Միկոյեանները սպառնալիքներ էին կարդում Հայաստանի կառավարութեան, միւս կողմից, անշուշտ, Բազուի կոմունիստների ներշնչումով, Զիչերինը, յունիս 4-ին, հեռագրում էր Երևան, թէ՝ «Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, Ալեքսանդրապոլում, Երևանում, Սարրդամիշում, Կարսում և Հայաստանի այլ քաղաքներում հարիւրաւոր կոմունիստներ են ձերբակալուած։ Հայաստանի կառավարութիւնը թոյլ է տալիս ինքնաղատասատան և դաղտնի գնդակահարում է կոմունիստ-